

*Հողվածը որպես գեկուցում կարդացվել է 2008 թ. նոյեմբերի 13-14-ին՝
Թեհրանում կայացած «Հայ Դատն այսօր» 6-րդ խորհրդածրոյովում:
Առաջին անգամ հրատարակվել է «ԱԶԳ» օրաթերթում 2008թ. դեկտեմբերի 13-ին:*

Հայ-թուրքական հակամարտության կառուցվածքային վերլուծություն

*Արմեն Այվազյան
Քաղաքական գիտությունների դոկտոր,
«Արարատ» ռազմավարագիտական կենտրոնի տնօրեն*

Նախաբան

1991 թ. Հայաստանի անկախացումով Հայկական հարցը վերադարձավ միջազգային ասպարեզ, բայց արդեն ոչ իբրև արևմտահայության փրկության հարց, ինչպես այն հայտնի էր 19-րդ դարի վերջին-20-րդ դարի սկզբին: Հայաստանի արևմտյան մասում հայությունն այլևս չկար՝ այն բնաջնջված էր 1894-ից մինչև 1923 թթ.՝ երեք հիմնական փուլերով (1894-1896, 1909, 1915-1923 թթ.) իրագործված ցեղասպանության ընթացքում: Խորհրդային ժամանակաշրջանում հայաթափվեցին նաև Հայաստանի արևելյան շրջաններից մի քանիսը, այդ թվում՝ Նախիջևանը և հյուսիսային Արցախը:

1991 թ. Հայկական հարցը միջազգային ասպարեզ վերադարձավ որպես Հայաստանի նորաստեղծ պետականության վերապրելու խնդիր: **Հայ-թուրքական հակամարտությունը** (այսուհետ՝ ՀԹՀ) թևակոխել է նոր փուլ, որի հիմնական առանձնահատկությունը միջազգայնորեն ճանաչված Հայաստանի Հանրապետության գոյությունն է: Հայաստանն աշխարհի քարտեզի վրայից վերացնելու Թուրքիայի քաղաքականությունը վերանայման չի ենթարկվել: Այժմ Թուրքիան փորձում է թույլ չտալ հայկական նորանկախ պետականության կայացումը և կործանել այն դեռևս սաղմնային վիճակում: Այս խնդիրը Թուրքիան փորձում է լուծել միջնորդավորված՝ իր դաշնակից Ադրբեջանի միջոցով, որովհետև միջազգային ներկա պայմաններն ու իր ներքին ծանր խնդիրները կանխում են թուրքական ուղղակի ներխուժումը Հայաստան¹:

Հայոց վերականգնված պետականությունն իր արևելյան սահմանների ողջ երկայնքով 1991-1994 թթ. ենթարկվեց ադրբեջանական ագրեսիայի: Հայաստանն (ռազմավարական առումով մեկ միավոր կազմող ՀՀ-ն ու չճանաչված ԼՂՀ-ն) անվտանգության կայուն երաշխիքների, նախևառաջ պաշտպանունակ սահմանների կարիք ուներ: Այս խնդիրը, մեծ գոհողությունների գնով, հաջողվեց մասնակիորեն լուծել հայրենիքի որոշակի հողակտորներն ազատագրելու և այնտեղ ռազմաքաղաքական վերահսկողություն հաստատելու շնորհիվ:

Ազատագրական պատերազմում 1994 թ. հայոց նվաճած հաղթանակից հետո Թուրքիան ամեն կերպ խրախուսում է Ադրբեջանի ռազմականացումն ու ռազմատենչությունը, հանդես գալով վերջինիս՝ Հայաստանի դեմ իրականացվող բոլոր գործողությունների անմիջական մասնակից, ավագ խորհրդատու, հաճախ՝ նախաձեռնող ու ղեկավար: Թուրքիան երաշխավորում է նաև Նախիջևանի երկրամասի՝ Ադրբեջանի կազմում պահպանումը: Այս ամենից գատ, Թուրքիան իրականացնում է Հայաստանի դեմ անթաքույց պատերազմական ակտ՝ շրջափակում:

Թուրքիայի օրհնանքն ու խրախուսանքը մեծապես նպաստեցին 1991-1994 թթ. պատերազմի սանձազերծմանը: Այդ առումով իր դերն ունեցավ նաև Բաքվի ղեկավարների փոխառած (նախագահ Ա. Էլչիբեյի օրոք՝ բացեիքաց ընդունվող) պանթուրքական գաղափարախոսությունը, որն Ադրբեջանի պետականության կառուցումն ու կայացումը նախատեսում է ծավալապաշտական եղանակով՝ ամբողջ Հայաստանի, հետագայում նաև Իրանի ու Վրաստանի որոշ տարածքների բռնագրավման հաշվին: Չհաշտվելով Արցախի ազատագրության փաստի հետ, Բաքուն առաջնորդվում է մի լրացուցիչ գործնապաշտ (պրագմատիկ) հաշվարկով ևս, այն է՝ թշնամու կերպար ստեղծելով, Ադրբեջանի ժողովուրդներին կառավարելու առավել դյուրին եղանակներ գտնել:

Չպետք է մոռանալ, որ Ադրբեջանը միացել է հայության դեմ իրականացվող ցեղասպանական քաղաքականությանն իր ստեղծման օրից՝ 1918 թ.-ից ստանձնելով Հայաստանն արևելքից մաս-մաս զավթողի դերը և շարունակելով այն նաև խորհրդային տարիներին: Հայաստանը, փաստորեն, գործ ունի երկու դաշնակից պետությունների համատեղ ու համաձայնեցված թշնամական քաղաքականության հետ: Լայն առումով, ՀԹՀ-ն ընդգրկում է նաև հայ-ադրբեջանական հակամարտությունը, ներառյալ Արցախյան հիմնախնդիրը: Այս քննության մեջ, սակայն, խնդրին անդրադառնալու ենք ավելի նեղ՝ զուտ հայ-թուրքական շրջանակներում:

19-րդ դարի երկրորդ կեսին՝ Ռուսաստանի հետ մղած երկու պատերազմների միջև ընկած ժամանակահատվածում (1856-1877թթ.), Օսմանյան Թուրքիան հղացավ հայությունն իր բնօրրան-հայրենիքում՝ Հայկական լեռնաշխարհում, բնաջնջելու քաղաքականություն, որն էլ ՀԹՀ-ին հաղորդեց անսովոր բնույթ և սրություն: Այդ տարիներից մինչև այսօր ՀԹՀ-ն երբեք չի ընդհատվել՝ ո՛չ նույնիսկ այն կարճ միջոցին (1907-1912թթ.), երբ օրվա հայ քաղաքական ամենաազդեցիկ ուժը՝ ՀՅԴ-ն, համագործակցում էր երիտթուրքերի հետ, հայ և թուրք ղեկավարների միջև հարաբերություններն էլ արտաքուստ ջերմ ու բարեկամական էին, ո՛չ էլ խորհրդային երկար ու ձիգ յոթը տասնամյակի ընթացքում: Այդ ժամանակահատվածներում ՀԹՀ-ն, թաքուն կամ բացահայտորեն, շարունակվել է քաղաքական, տեղեկատվական, հոգեբանական, մշակութային ճակատներում, երբեմն էլ նույնիսկ զենքի գործադրմամբ (մասնավորապես, հայ վրիժառուների և թուրք գաղտնի ծառայությունների գործողությունները):

Այսպիսով, անցնելով միջազգային քաղաքական համակարգի դարաշրջիկ հեղափոխու-թյունների միջով՝ ՀԹՀ-ն հիմքում մնացել է անփոփոխ: ՀԹՀ-ի առանցքում ընկած է մի կողմից՝ Հայաստանը ոչնչացնելու Թուրքիայի նպատակը, մյուս կողմից՝ Հայաստանի պետականությունը կայացնելու և անվտանգության երկարաժամկետ երաշխիքներով ապահովելու հայ ժողովրդի պայքարը:

ՀԹՀ-ի տևականությունը, անփոփոխ օրակարգով պատմական մի քանի փուլերի միջով անցնելը և նորանոր շերտերով բազմապատկվելը, տարածքային մեծ ընդգրկումն այս հակամարտությանը հաղորդել են անսովոր բարդ կառուցվածք և տարողունակ բովանդակություն: ՀԹՀ-ի համարժեք ընկալումն ինքնին դարձել է մասնագիտական խնդիր: Մինչդեռ ՀԹՀ-ի նկատմամբ հայ քաղաքական վերնախավի և հասարակական-քաղաքական մտքի ցուցաբերած մոտեցումներն ու քաղաքականությունն առայժմ սիրողական բնույթ ունեն:

Հուսով ենք, ՀԹՀ-ի ստորև ներկայացվող համառոտ կառուցվածքային վերլուծությունը կարող է նպաստել Հայաստանի արտաքին քաղաքականության իրապաշտ մշակումներին և անվտանգության համակարգի կայացմանը:

Հայ-թուրքական հակամարտության կառուցվածքը

ՀԹՀ-ի արդի փուլն ընթանում է տասը հիմնական մակարդակներում (բնագավառներում), որոնցից յուրաքանչյուրում, ի տարբերություն Հայաստանի, Թուրքիան դրսևորում է հստակ դիրքո-րոշումներ ու հետևողական քաղաքականություն: Մինչդեռ Հայաստանի արտաքին քաղաքակա-նության օրակարգում այդ մակարդակներից և նրանց ենթամակարդակներից շատերը ցայսօր ընդգրկված չեն, հաճախ, անգամ, նկատված էլ չեն, իսկ նկատվածների վերաբերյալ էլ համապարփակ հայեցակարգ և համարժեք քաղաքականություն դեռ չեն մշակվել:

Նախ, թվարկենք ՀԹՀ-ի մակարդակները (բնագավառները)՝ իրենց ենթամակարդակներով (խնդիրներով)։

1) հասկացական-տերմինաբանական մակարդակ

1.1. հայրենիքի գաղափարի ընկալման և աղճատման խնդիրը:

1.2. տարածք զավթողին ու բազմահազարամյա հայրենիք կորցնողին գլխիվայր շրջելու փորձեր ու հայկական կողմի կրավորական վերաբերմունքը:

1.3. հակամարտության սահմանումների թերի մշակվածության և աղավաղման խնդիրն ու դրա դեմ պայքարի բացակայությունը:

- 1.4. Հայաստանի և հայության դեմ Թուրքիայի վարած քաղաքականության ոչ-համարժեք գնահատումը:
- 1.5. Հայաստանի իշխանությունների՝ Թուրքիայի ներկա վարչակարգին և քաղաքական գործիչներին սխալ գնահատելը:
- 1.6. Հայաստանի և հայոց պատմամշակութային ժառանգության դեմ քարտեզագրական-տեղանվանագիտական պատերազմի վարում և հայկական կողմից դրա անտեսումը²:

2) քաղաքական մակարդակ

Այս ոլորտում Թուրքիայի թշնամական գործողություններն են՝

- 2.1. Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու 17-ամյա հրաժարումը և այդ քայլին քաղաքական գնահատական տալուց Հայաստանի խուսափումը:
- 2.2. Հայաստանի 15-ամյա շրջափակումը և այդ թշնամական գործողությունն ըստ արժանվույն գնահատելու Հայաստանի չկամությունը:
- 2.3. Ադրբեջանին ցուցաբերվող դիվանագիտական լիակատար օժանդակությունը և այդ թշնամական գործողությանը Հայաստանի կրավորական վերաբերմունքը:
- 2.4. Մեսիտթեթի թուրքերին (նրանց անվան տակ՝ նաև այլ թյուրք տարրերին) հայաբնակ Ջավախքում բնակեցնելու հետևողական ջանքերը և դրանց վերաբերյալ հայկական կողմի պահպանած լռությունը:
- 2.5. Միջազգային ասպարեզում Հայաստանի շահերի դեմ ուղղված բազմապիսի գործողություններն ու դրանց անտեսումը հայկական կողմից:
- 2.6. Հայաստանին առաջադրած անընդունելի նախապայմանները, այդ թվում երեք հիմնականները՝ Արցախյան հիմնախնդիրը հոգուտ Ադրբեջանի տարածքային ամբողջականության լուծելը, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի կասեցումը, Հայաստանի արևմտյան՝ Թուրքիայի բռնազավթած տարածքներից պաշտոնական Երևանի հրապարակային ու ինչ-որ հավերժական բնույթ կրող հրաժարումը և հայկական կողմի՝ սեփական նախապայմաններից, այն է՝ վստահության և անվտանգության մեխանիզմներ ստեղծելու իրավունքից հրաժարումը³:

3) պատմաքաղաքական մակարդակ

- 3.1. Թուրքիայի՝ Հայոց ցեղասպանության ժխտման ու պատմական իրականության աղճատման պետականորեն կազմակերպված մեծ արշավն ինչպես երկրի ներսում, այնպես էլ միջազգային ասպարեզում:
- 3.2. 1998-2008 թթ. Հայաստանի՝ ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի նկատմամբ որդեգրած բարյացակամ վերաբերմունքը, թեև 2008 թ. կեսերից այդ բնազավառում նկատվում է Հայաստանի առանց այն էլ ոչ մեծ ակտիվության նվազում:

4) միջազգային իրավունքի մակարդակ

- 4.1. Մերի պայմանագրի չիրագործման հետևանքով տարածաշրջանում առաջացած գերլարված ռազմավարական իրավիճակի խնդիրը, մասնավորապես՝ հայկական պետականության կենսունակությունն ապահովող տարածքային երաշխիքների թերի ու չճանաչված լինելու և քրդական պետականության ստեղծման հարցերում:
- 4.2. 1921 թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերի՝ իրավական անկատարության և ներկայիս անլիարժեք գործունեության խնդիրը:
- 4.3. Թուրքիայի քրեական օրենսգրքի 301-րդ հոդվածով՝ Հայոց ցեղասպանության մասին բարձրաձայնելն ու ՀԹՀ-ի վերաբերյալ հայկական տեսակետի արտահայտումը գործնականում պատժելի դարձնելու խնդիրը:
- 4.4. Հայաստանի իշխանությունների՝ ՀԹՀ-ի պատմաիրավական մակարդակի լիակատար անտեսումը:

5) տեղեկատվական-հոգեբանական պատերազմի մակարդակ

5.1. Ղարաբաղյան հիմնախնդրում Թուրքիայի Ադրբեջանին ցուցաբերվող քարոզչական մեծ օժանդակությունը:

5.2. Հայաստանի և հայության դեմ Թուրքիայում, միջազգային ասպարեզում, Հայաստանում և սփյուքահայ միջավայրում Թուրքիայի իրականացվող տեղեկատվական ու հոգեբանական բազմաթիվ, բազմապիսի ու հետևողական գործողությունները, այդ թվում՝

5.2.1. հակահայկական գրականության և այլ նյութերի պատրաստումն ու տարածումը, որ կազմակերպված բնույթ է ստացել դեռևս 1920-ական թվականներից, հետզհետե միայն ուժգնացել է, նոր ոլորտներ ընդգրկել և բազմալեզու դարձել⁴,

5.2.2. արտասահմանում թուրքական քոլեջների միջոցով հակահայկական տրամադրությունների սերմանումը⁵,

5.2.3. թուրքական դեսպանությունների, պետական ու մասնավոր հաստատությունների միջոցով Հայկական հարցը ճշմարիտ լույսի ներքո լուսաբանող տեղեկատվության և վերլուծությունների դեմ տարվող լոբբիստական ծավալուն աշխատանքը:

5.3. Հայաստանում իբր գոյություն ունեցող Քրդստանի բանվորական կուսակցության ռազմական բազաների մասին ապատեղեկատվության պարբերական տարածումը:

5.4. Թուրքիայում Հայոց ցեղասպանության հեղինակների և կազմակերպիչների, այդ թվում Թալեաթի, հերոսացումը:

5.5. Հայաստանի և Սփյուռքի միջև սեպ խրելու քարոզչական հետևողական ջանքերը⁶:

5.6. Սփյուռքահայերի բնակության երկրների կառավարություններին ու ժողովուրդներին հայության դեմ տրամադրելը⁷:

5.7. Հայաստանից ու Մերձավոր Արևելքի երկրներից հայերի արտագաղթը խրախուսելու և այն դեպի հեռավոր մայրցամաքներ ուղղելու Թուրքիայի գաղտնի գործողությունները:

5.8. Հայաստանն իր դեմ իրականացվող տեղեկատվական-հոգեբանական այս պատերազմում դրսևորում է ջայլամի քաղաքականություն:

6) տնտեսական մակարդակ

6.1. Հայաստանի բազմամյա շրջափակումը:

6.2. Թուրքիայի՝ Հայաստանին մեկուսացնելու նպատակով տարածաշրջանային հատուկ ծրագրերի հեղինակումը, այդ թվում՝ Կարս-Թրիլիսի-Բաքու երկաթգծի կառուցման նախաձեռնումը:

7) մշակութային մակարդակ

7.1. հայկական պատմամշակութային ժառանգության ոչնչացումն և յուրացման փորձերը:

7.2. Ինչպես Թուրքիայում, այնպես էլ միջազգային ասպարեզում Հայաստանի պատմության կեղծումը⁸:

7.3. Իր դեմ մղվող մշակութային պատերազմում Հայաստանի դրսևորած բացարձակ անգործունեությունը:

8) ռազմական մակարդակ

8.1. Հայաստանի դեմ պատերազմելու նախապատրաստություններում Ադրբեջանին Թուրքիայի ցուցաբերվող ամբողջական աջակցությունը, այդ թվում՝

8.1.1. հետախուզական տվյալների հաղորդումը,

8.1.2. զենքի և զինամթերքի մատակարարումը,

8.1.3. ռազմական խորհրդատվության տրամադրումը, ներառյալ Ադրբեջանի Գլխավոր շտաբի գործունեության կազմակերպումը, եթե ոչ ղեկավարումը,

8.1.4. սպաների պատրաստում-վերապատրաստումը և հատուկ նշանակության ջոկատների մարզումը,

8.1.5. ՆԱՏՕ-ի ծրագրերին և աշխատանքներին Ադրբեջանի ներգրավվելուն աջակցումը:

8.2. 1991 թ. ի վեր Հայաստանի դեմ պարբերաբար հնչեցված սպառնալիքների խնդիրը, այդ թվում՝ իբր Հայաստանի Հանրապետությունում և Արցախում տեղակայված Քրդստանի բանվորական կուսակցության ռազմական ճամբարների մասին ապատեղեկատվությունը⁹:

8.3. Հայաստանի՝ այս հարցերի նկատմամբ պահպանվող լռությունը և Թուրքիայի հետ ՆԱՏՕ-ի շրջանակներում իրականացվող ռազմաքաղաքական համագործակցությունը¹⁰:

9) Թուրքիայում ապրող հայ փոքրամասնության մարդկային իրավունքների պաշտպանությունը

9.1. Կ. Պոլսի հայոց պատրիարքի վրա ճնշում բանեցնելով՝ նրան թուրքամետ հայտարարություններ և կոչեր անել ստիպելը:

9.2. Թուրքիայում Հայոց ցեղասպանության գոհերի հիշատակը ոգեկոչելու արգելումը:

9.3. հայ ժողովրդի մեծագույն դահիճներից մեկի՝ Քեմալ Աթաթուրքի պաշտամունքի պետականորեն պարտադրումը պոլսահայության համայնքային կառույցներում, այդ թվում դպրոցներում:

9.4. Թուրքիայի բոլոր քաղաքացիներին, այդ թվում հայերին, սահմանադրորեն թուրք հռչակելը:

9.5. հայ փոքրամասնության անվտանգության ապահովումը:

9.6. Հայաստանի՝ ՀԹՀ-ի այս մակարդակի լիակատար անտեսումը:

10) Հայության տարբեր հաստատվածների միջև, ներառյալ Հայաստանի ներքաղաքական դաշտում, ՀԹՀ-ի հողի վրա առաջացող լուրջ պատակտումների մակարդակ

10.1. Հայ ժողովրդի բնիկ հայրենիքի արևմտյան՝ այժմ Թուրքիայի սահմաններում գտնվող մասից հրաժարվելու մասին պաշտոնական Երևանի այլազան հայտարարությունները և ակնարկներն ընդունակ են.

10.1.1. նոր բաժանարար գծեր քաշել հայ հասարակության մեջ, ինչպես Հայաստանում, այնպես էլ Հայաստանի և Սփյուռքի միջև¹¹,

10.1.2. բարոյալքել հայության՝ ազգային նպատակների իրականացման համար մղվող պայքարն իր ամբողջության մեջ:

10.2. Հայ և թուրք պատմաբաններից բաղկացած համատեղ հանձնաժողովի ստեղծման հարցում¹²:

10.3. ՀԹՀ-ի այս բնագավառի առաջացումն զգալիորեն պայմանավորված է ՀՀ իշխանությունների գործունեությամբ:

ՀԹՀ-ի այս բոլոր մակարդակների հիմքում ընկած է Հայաստանի վերականգնված պետականության կենսունակությունը, պաշտպանունակությունը, տնտեսական զարգացումը, հետագայում նաև ժողովրդագրական աճը (հայահավաքը) ապահովող հողային խնդիրը՝ Հայկական հարցը: Այս ցանկն ինքնին փաստում է, որ Թուրքիան Հայաստանի և հայության դեմ իրականացնում է համընդհանուր հարձակողական քաղաքականություն՝ տասնյակ ուղղություններով:

ՀՀ արտաքին քաղաքականությունն անտեսում է Թուրքիայի վերը նշված գործողություններից շատերը: Ամբողջովին անտեսված են թիվ 1, 4, 5, 7, 9, 10 մակարդակները, իսկ մյուսներում որոշ ենթամակարդակներ կա՛մ անտեսված են մնում, կա՛մ չեն ստանում համարժեք գնահատական: Կարճ ասած՝ Թուրքիայի նկատմամբ Հայաստանի Հանրապետության վարած քաղաքականությունն անկախության 17 տարիների ընթացքում չի մշակվել, մնացել է բարձիթողի վիճակում,

անպաշտպան թողնելով Հայաստանի անվտանգության համար կենսականորեն կարևոր բազմաթիվ ճակատներ:

Առանձին քննության է արժանի ՀԹՀ-ի հիմնարար՝ հասկացական-տերմինաբանական բնագավառը: Որքան էլ ցավալի է, սակայն ՀԹՀ-ի հասկացություններն ու տերմինաբանությունը մանրագին մշակել է միայն թուրքական կողմը, մինչդեռ հայկական կողմը մինչև այսօր չի կարողացել ըստ արժանվույն գնահատել և ճիշտ բնորոշումներով ներկայացնել իրավիճակը: Աղավաղված է հենց ՀԹՀ-ի բնույթը՝ հակամարտությունը, որը փոխարինվել է «հարևանություն», «հարաբերություններ» և նմանատիպ բառերերով: Բայց չէ՞ որ երկարատև թշնամական հարաբերությունները ոչ այլ ինչ են, քան հակամարտություն¹³:

Այսպես՝ Թուրքիայի՝ Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու 17-ամյա մերժումը պետք է գնահատվի ոչ այլ կերպ, քան Հայաստանի՝ պետականություն ունենալու իրավունքն արմատից մերժելու փորձ: Սակայն, պաշտոնական Երևանն այդպիսի գնահատական երբեք չտվեց:

Թուրքիան Հայաստանին անվանում է Ադրբեջանի տարածքները զավթած երկիր՝ «օկուպանտ», մինչդեռ Հայաստանը վախենում է հիշեցնել, որ իսկական զավթիչը Թուրքիան է, որը ցեղասպանության միջոցով հայաթափել և յուրացրել է Հայաստանի արևմտյան մասն ամբողջությամբ, ինչպես նաև արևելյան մասի մի հատվածը՝ Կարս-Արդահան-Մուրմալուն, հայոց ազգային խորհրդանիշ Մասիսներով ու Անի միջնադարյան մայրաքաղաքով հանդերձ:

Վտանգվել է հայրենիքի գաղափարի ճշգրիտ ընկալումը, որը հիմքային նշանակություն ունի ազգի դիմադրողականության ու բուն գոյության համար: Ակնարկներ են արվում Հայաստանի արևմտյան մասից մեկընդմիջտ հրաժարվելու մասին: Մասնավորապես, ՀՀ նախագահի վերջին հայտարարություններից մեկում ասվում էր, որ ՀՀ որևէ պաշտոնյա երբեք տարածքային պահանջների մասին չի խոսել¹⁴, Արևմտյան Հայաստանի հարց չի բարձրացրել, մյուսում՝ Արևմտյան և Արևելյան Հայաստանն անվանված են լոկ «աշխարհագրական եզրեր»¹⁵, առանց նկատելու, որ դա թուրքական քարոզչության մշակած հին և ամենավտանգավոր դրույթներից է¹⁶: Ասվում էր նաև, որ հայ-թուրքական խնդիրների լուծումն ապագա սերունդներին չպետք է թողնվի¹⁷: Եվ քանզի բոլորին հասկանալի է, որ հայոց հայրենիքի բռնագրավված հատվածի ամբողջական կամ մասնակի ազատագրումն այսօրվա խնդիր լինել չի կարող, ուրեմն ակնարկվում է հայրենիքի այդ հատվածի վերջնական ուրացում: Այնինչ Թուրքիայի՝ հայ ժողովրդին հասցրած անչափելի վնասի դիմաց փոքրիշատե համարժեք փոխհատուցումը, նախևառաջ, տարածքների վերադարձի տեսքով, Հայաստանի երկարաժամկետ անվտանգության հիմնական երաշխիքն է: Հայրենիքի օտարված մասից հրաժարվելը՝ նշանակում է հրաժարվել սեփական ինքնությունից՝ տեսանելի և անտեսանելի այն հազարավոր կապերից, որոնք հային հայ են պահում: Այդպիսի քայլը կկազմալուծի հայերի աշխարհընկալման ու կենսանպատակների ողջ համակարգը, դարձնելով նրանց կամագուրկ և աննպատակ զանգված, որից հետո Հայկական հարցի թուրքական սցենարով վերջնական լուծումն այլևս հատուկ ճիգեր չի պահանջի: Հայրենիքի օտարված մասի ուրացումն անիմաստ է նաև քաղաքական տեսանկյունից՝ այն որևէ տարրով չի ամրապնդում Հայաստանի անվտանգությունը: Աշխարհում կան տասնյակ մեծ ու փոքր պետություններ, որոնք ունեն տասնամյակներով ձգվող տարածքային վեճեր, և այդ պետություններից որևէ մեկի մտքով չի անցնում, որ կարելի է հենց այնպես հրաժարվել ռազմավարական մեծագույն արժեքից՝ տարածքից, առավել ևս՝ եթե խոսքը վերաբերում է հայրենիքին¹⁸:

Փոքր-ինչ շեղվելով, նկատենք, որ, չգիտես ինչու, վերջին ամիսներին ՀՀ ղեկավարության առաջին դեմքերը մեկը մյուսի ետևից թուրքական ՋԼՄ-ներին հարցազրույցներ են տալիս, որոնք ավելի հարցաքննության են նմանվում: Վերջին շրջանում թուրքերին երեք հարցազրույց է տվել ՀՀ նախագահը (2008 թ. օգոստոսի 21-ին CNN-Turk-ի, օգոստոսի 28-ին «Ռադիկալի», սեպտեմբերի 20-ին «Միլլիեթի» թղթակիցներին), ևս մի քանիսն էլ՝ ՀՀ արտգործնախարարը¹⁹: ՀՀ վարչապետն էլ մեկ հարցազրույց է տվել ադրբեջանական *Day.az* գործակալությանը (հոկտեմբերի 7-ին)²⁰: Այդ ընթացքում ո՛չ մի թուրք կամ ադրբեջանցի պաշտոնյա գեթ մեկ հարցազրույց չի տվել հայկական

լրատվամիջոցներին: Հակամարտող երկրների միջպետական հարաբերություններում այսպիսի երևույթն ինքնին վկայում է անհավասարության մասին, ընդ որում՝ ի վնաս Հայաստանի:

ՀՀ իշխանությունների զիջողական ու պարտվողական մոտեցումները ՀԹՀ-ին ևս մեկ անգամ ընդգծվեցին 2008 թ. նոյեմբերին, երբ Առաջին աշխարհամարտի ավարտի 90-ամյակն էին նշում և իրենց զոհերին ոգեկոչում բոլոր մասնակից պետությունները: Եվ միայն Հայաստանը, որն այդ պատերազմում բոլորից ավելի էր զոհ ու կորուստ տվել, պաշտոնական մակարդակով մեկ բառով իսկ չհիշատակեց այդ տարեդարձը, որպեսզի հանկարծակի հոդս չցնդեն «հայ-թուրքական հաշտեցման»՝ հայ քաղաքական վերնախավի փուչ պատրանքները:

Թուրքիայի ներկա հայաստյաց իշխանություններին և քաղաքական գործիչներին տրվում են սխալ գնահատականներ: ՀՀ բարձրագույն ղեկավարությունը նրանց անվանում է, ոչ ավելի, ոչ պակաս, քան «խիզախ գործընկերներ»²¹ և չի ուզում նկատել, որ նրանք թուրքական ավանդական ցեղասպանական քաղաքականության մերօրյա շարունակողներն են: Իրականում, Թուրքիայի քաղաքական համակարգի բնույթը ֆաշիստական է և՛ իր օրինականացված ծայրահեղ ազգայնամոլությամբ, և՛ ազգային փոքրամասնությունների նկատմամբ վարած դաժան բռնամիջոցներով՝ ընդհուպ մինչև բնաջնջում և տեղահանում, և՛ մինչև այսօր գոյատևող առաջնորդի պաշտամունքով, և՛, ու առավել ևս, Հայաստանի ու հայ ժողովրդի նկատմամբ վարած անզիջում հարձակողական քաղաքականությամբ²²: Եթե Արևմուտքը կամ այլ պետություններ չեն բնորոշում թուրքական պետականությունն ինչպես որ այն կա, դա մի բան է՝ նրանք դրա կարիքը չունեն: Սակայն, Հայաստանը, չտալով ցեղասպանությունը ժխտող, այսինքն՝ նոր ցեղասպանություն իրականացնելու պատրաստ այդ թուրք գործիչների ճիշտ գնահատականը, ընկնում է լուրջ թյուրիմացության մեջ. ո՛չ ինքն է տեսնում և հասկանում իր թշնամու բուն գաղափարախոսությունը, ռազմավարական հաշվարկներն ու նպատակները, ո՛չ էլ անգամ փորձում է իր ծանր աշխարհառազմավարական իրավիճակն ըստ էության ներկայացնել միջազգային հանրությանը: Իսկ ահա ինչպես է բնորոշում թուրքական ժխտողականությունը Ցեղասպանագետների միջազգային ընկերակցության նախագահ Գրեգորի Սթենթոնը. «Ժխտումը ցեղասպանության վերջին փուլն է: Դա տուժող խմբին հոգեբանորեն ու մշակութային առումով ոչնչացնելու, այդ խմբի անդամներին նույնիսկ իրենց հարազատների մասին հիշողությունից զրկելու շարունակական փորձ է: Հենց դա է Թուրքիայի կառավարությունն այսօր անում ամբողջ աշխարհի հայերի նկատմամբ»¹: Ողջակիզմումից վերապրած, Նոբելյան մրցանակակիր 90-ամյա Էլի Վիգելը Հայոց Ցեղասպանությունը քողարկելու Թուրքիայի արշավը բազմիցս անվանել է «կրկնակի սպանություն, քանի որ դրանով Թուրքիան ձգտում է սպանել տեղի ունեցած վայրագությունների մասին հիշողությունը»²: Ճիշտ այսպիսի և առավել խիստ գնահատականներ պետք է տային թուրքական ժխտողականությանը ՀՀ իշխանությունները, սակայն մինչև այսօր չեն արել:

Առհասարակ, արդեն ժամանակն է ուսումնասիրության առարկա դարձնելու ոչ միայն Թուրքական ժխտողականության երևույթը, այլև Հայկական ժխտողականությունը, այն է՝ աշխարհաքաղաքական արմատական իրականության՝ Հայաստանի նկատմամբ Թուրքիայի թշնամական քաղաքականության ժխտումը: Եթե Թուրքական ժխտողականությունը հիմնականում ռացիոնալ կերպով մշակված քաղաքականություն է, որը փորձում է կանխել Թուրքիայի համար Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հնարավոր անցանկալի հետևանքները, ապա Հայկական ժխտողականությունը դրսից թելադրվող արհեստական «հայ-թուրքական հաշտեցման» քաղաքականության ծայրահեղ անքննադատ, իռացիոնալ ընդունում է: Ընդ որում՝ այն, ինչ ներկայացվում է որպես «հայ-թուրքական հաշտեցում» ոչ այլ ինչ է, քան հայկական կողմի անձնատուրություն՝ կապիտուլյացիա ի դեմս Թուրքական պետության իրականացվող մշտական հակահայկական գործողությունների:

¹ [David Holthouse, "State of Denial: Turkey Spends Millions to Cover Up Armenian Genocide," Intelligence Report, Summer 2008](http://www.intelligence.com.au/2008/07/22/state-of-denial-turkey-spends-millions-to-cover-up-armenian-genocide/): Այս հոդվածի հայերեն թարգմանությունը տե՛ս «Արարատ» ռազմավարագիտական կենտրոնի Արտասահմանյան մամուլի տեսությունում (<http://artmamul.ararat-center.org/?p=143>): Արտատպվել է «Իրավունքը de facto»-յում (թիվ 14/74/. 27.02-2.03.2009)5

² Նույն տեղում:

Իր հարցազրույցներից մեկում, ՀՀ արտգործնախարարը, փաստորեն, խոստովանում է Հայաստանի արտաքին քաղաքականության հավկուրությունը, ասելով, որ ինքը «Թուրքիայի հետ հարաբերությունների նորմալացման առջև որևէ խոչընդոտ չի տեսնում» և որ «այդ հարցում վերին աստիճանի լավատես է»²³: Այսինքն, մեր արտաքին քաղաքականության տեսադաշտից դուրս են մնացել ՀԹՀ-ի վերը նշված տասը մակարդակներն ու տասնյակ ենթամակարդակները, իսկ դրանց տեղն զբաղեցրել է անհիմն «լավատեսությունը»²⁴:

Ավելին՝ ինչպես արդեն նշվեց, հայկական կողմը, որը Թուրքիայի իրականացրած ցեղասպանության գոհն է և այսօր էլ ենթակա է վերջինիս հետևողական թշնամական գործողություններին՝ ՀԹՀ-ն չի էլ սահմանում իր իսկական անվամբ՝ իբրև հակամարտություն: Այնինչ, եթե գործ ունենք հակամարտության հետ, ապա պետք է արմատապես փոխել քաղաքական բառապաշարը և խոսել ոչ թե չեղած «հարաբերությունների ջերմացումից», դրանցում իբր արձանագրված «ձնհալից», այլ, փոխարենը, միջազգային համայնքին ու, առաջին հերթին, հենց հայկական լսարանին ներկայացնել ՀԹՀ-ի բուն պատճառները, անվտանգության և վստահության մեխանիզմներ կառուցելու հնարավորությունները կամ դրանց բացակայությունը: Այսպիսի բարդ կառուցվածք ունեցող հակամարտության երկարաժամկետ կարգավորմանը չեն կարող օժանդակել նաև լարվածության մակերեսային մեղմացման անհեռանկար նախաձեռնությունները, ինչպիսին էր «Ֆուտբոլային դիվանագիտությունը» (որն, ի դեպ, բացի վնասից որևէ օգուտ Հայաստանին չի բերել):

Այլապես՝ հայկական դիվանագիտության մատուցմամբ՝ «հայ-թուրքական հարաբերություններում» առկա խնդիրներն ընդամենը երկուսն են՝ դիվանագիտական հարաբերությունների բացակայությունը և սահմանի փակ լինելը (որը հաճախ չի էլ բնորոշվում ճիշտ տերմինով, այն է՝ *շրջափակման վերացում*): Մնացած հարցերը դիտվում են իբրև հետագայում քննարկման ենթակա և նույնիսկ անվանվում են «զգացական» կամ «վիճելի»²⁵: (Մենք տեսանք, թե որքան շատ են և ծանրակշիռ այդ զգացական կամ վիճելի հարցերը:) Հայկական դիվանագիտությունը տարիներ շարունակ կրկնում է վաշինգտոնյան ծագում ունեցող այն սխալ թեզը, թե այս երկու խնդիրներն էլ Ղարաբաղյան հակամարտության արդյունք են և իբր Թուրքիայի քաղաքականությունը Ադրբեջանի «պատանդն ու գերին է» դարձել: Եվ սա այն դեպքում, երբ ինքը՝ Թուրքիան, ամեննին այդպիսի պարզունակ գնահատական չի տալիս ընդդեմ Հայաստանի վարած իր քաղաքականությանը, այլ հստակ մատնանշում է, որ Ադրբեջանի շահերն ամուր շաղկապված են իր սեփական շահերին: Թե՛ Թուրքիայի, թե՛ Ադրբեջանի ղեկավարները բազմիցս հայտարարել են, որ իրենք ներկայացնում են «Մեկ ժողովուրդ՝ երկու պետություն»: Ահա այս կապակցությամբ մի բոլորովին թարմ վկայախոսություն: 2008 թ. դեկտեմբերի 1-ին Թուրքիայի արտգործնախարար Ա. Բարաջանն Ադրբեջանի իր գործընկերոջ՝ Է. Մամեդյարովի հետ համատեղ մամուլի ասուլիսի ժամանակ այս առթիվ հստակ է արտահայտվել. «Թուրք-հայկական սահմանների բացման և ղարաբաղյան հարցի հետ կապված խնդիրները լուծվելու են համալիր կերպով: ...Այս երկու հարցերն անբաժան են միմյանցից»²⁶: Բացի այդ, Թուրքիան առանձնացնում է ևս երկու դրդապատճառ, որոնք ուղղակի կապ չունեն Ադրբեջանի հետ՝ ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի կասեցումը և Թուրքիայի սահմանների պաշտոնական ճանաչումը (իրական նպատակը, ինչպես վերը նշվեց, այլ է՝ ոչնչացնել Հայաստանը):

Ըստ այդմ՝ **ՀԹՀ-ն բազմամակարդակ և բազմատարր հակամարտություն է**, որի լուծումը չի կարող սահմանափակվել միայն Հայաստանի շրջափակման վերացմամբ և դիվանագիտական հարաբերությունների հաստատմամբ: Միայն այդ երկու քայլի կատարումը Հայաստանի դեմ Թուրքիայի թշնամական քաղաքականության ավարտ չի նշանակի: Ինչպես նախկինում գրել ենք, Թուրքիան կբացի Հայաստանի հետ սահմանը մի դեպքում միայն. եթե իր հաշվարկները ցույց տան, որ դրանով Հայաստանին ավելի մեծ վնաս կպատճառի: «Բարիդրացիության» նոր պայմաններում Թուրքիան իր թշնամական քաղաքականությունը կտեղափոխի այլ, առավել վտանգավոր ոլորտներ, առաջ բերելով Հայաստանի ազգային անվտանգության համար շատ լուրջ խնդիրներ: Հետևելու է թուրքական տնտեսական և ժողովրդագրական ներխուժումը Հայաստան, ներքին արտադրողը շուկայից դուրս է մղվելու: Անկարան խրախուսելու է հայերի զանգվածային արտագաղթը Թուրքիա և թուրքերի մուտքը Հայաստան²⁷ (մասամբ՝ «մահմեդական հայերի» անվան տակ,

որի խայծը ՀՀ իշխանությունները կարծես կուլ են տվել²⁸), ունենալու ենք նաև հազարավոր խառնամուսնություններ: Թուրքական տնտեսական ներխուժմանը զուգահեռ ուժգնանալու են տեղեկատվական, գաղափարական, մշակութային ու հոգեբանական հարձակումներն ու թուրքական պետական քարոզչության անարգել ներթափանցումը Հայաստան²⁹: Հայկական հասարակությունը կարող է այս բոլոր խնդիրների լրջագույն մասնագիտական քննարկման, այլ ոչ թե ՁԼՄ-ներում, հատկապես հեռուստատեսությամբ, Թուրքիայի նկատմամբ բարյացակամություն քարոզող արշավների և ուղեղների միակողմանի մշակման:

Ամփոփենք. հայ-թուրքական պետական և ազգային շահերի ակնհայտ ներհակությունը, ռազմավարական շահերի կատաղի բախումը, գաղափարախոսությունների անհամատեղելիությունը և վերը թվարկված մյուս բոլոր թշնամական գործողություններն արգելում են հայ-թուրքական բազմամակարդակ հակամարտության կարգավորումը այսօր քարոզվող արագ, «սպորտային» միջոցներով: Այդպիսի ծանձաղ «լուծումների» արդյունքում կարող են տուժել միայն Հայաստանն ու հայ ժողովուրդը: ՀԹՀ-ի կարգավորման գլխավոր նախապայմանն ամուր և պաշտպանունակ Հայաստանի կայացումն է: Միայն դրանից հետո Թուրքիան և նրա դաշնակից Ադրբեջանը կհաշտվեն հայկական պետականության գոյության իրավունքի հետ:

Իրատեսությունն ու գործնապաշտությունը պահանջում են Հայաստանի արտաքին քաղաքականության վերադիրքավորում՝ Թուրքիայի ակնհայտ թշնամության անտեսումից դեպի Հայկական հարցի համակողմանի վերարժարում, ընդհուպ տարածքային փոխհատուցման վերաբերյալ քաղաքականապես իրապաշտ առաջարկների միջոցով³⁰:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

¹ Այս մասին մանրամասն տե՛ս **Ա. Այվազյան, Հիմնատարբեր՝ Հայաստանի ազգային անվտանգության հայեցակարգի, Մասն Ա**, 2-րդ, լրամշակված հրատ., «Լուսակն», Երևան, 2004 թ., էջ 107-108:

² **A. Ayvazyan, "Western Armenia vs Eastern Anatolia"**, *Europe & Orient* (Journal of the Institute Tchobanian, Paris), No. 4, 2007: Այս մասին տե՛ս **Ա. Այվազյան, Հայաստանի պատմության լուսարանումը ամերիկյան պատմագրության մեջ**, Երևան. «Արտագերս», 1998, էջ 37-40, 42 (ծնթ. 64), 43 (ծնթ. 65), 64-65, 223: **Լ. Մահակյան**, Բարձր Հայքի Բաբերդ, Սպեր, Դերջան գավառների տեղանուններն ու ժողովրդագրությունը XVI դարի օսմանյան աշխարհագիր մատյաններում, Երևան. «Լուսակն», 2007, էջ 77-98: **Է. Դանիելյան**, «Քարտեզագրական պատերազմը» և հայոց տեղանունների պաշտպանության հիմնախնդիրը, տե՛ս <http://blog.ararat-center.org/>:

³ Այս մասին առավել մանրամասն տե՛ս **Ա. Այվազյան, Նախապայմանների խնդիրը և հայ-թուրքական հարաբերությունների հեռանկարները**, «Հայոց աշխարհ», 09.09.2008:

⁴ Ամենավերջին ցայտուն օրինակներից է 9 լեզվով հրատարակված «Թուրքիա-2008» գրքույկը, որի հրատարակիչը Թուրքիայի պետությունն է (տե՛ս [«Թուրքիան իր թեզերն այս «գրքով» է բացատրելու»](http://artmamul.ararat-center.org/?p=97). - «Ջաման», 16 հոկտեմբերի 2008թ., հայերեն թարգմանությունը՝ <http://artmamul.ararat-center.org/?p=97>): Այս հակահայկական գրքի հրատարակությունը գալիս է մեկ անգամ ևս փաստելու Թուրքիայի անփոփոխ թշնամական քաղաքականությունը Հայաստանի և հայության դեմ՝ ջարդուփշուր անելով «հայ-թուրքական մոտալուտ հաշտեցման» խաբկանքները: Դեռևս Գարեգին Նժդեհն էր ահազանգում, որ «հայկական սպանդին հետևեց բարոյական եղեռնը՝ հայերի վարկաբեկումը»: Թվարկելով 1920-1940-ական թթ. թուրքերի քարոզած թեզերը, Նժդեհն ընդգծում էր, որ «հակահայկական քարոզչությունը, իրենց ռազմական, առևտրական ու մամուլի կցորդների հետ միասին, վարում էին թուրքական դեսպանություններն ու հյուպատոսությունները: Դրանում ակտիվ դեր էր խաղում և թուրք ուսանողությունը». - տե՛ս **Գարեգին Նժդեհ, Հովհաննես Քաջազունի, Նշխարներ**, Երևան, «Ազգայնական ակումբ», 2002, էջ 33:

⁵ Տե՛ս **Կ. Վրթանեսյան, Ս. Մարտիրոսյան. Համացանցը և մենք, Ռազմավարության և անվտանգության հարցեր (ժողովածու)**, խմբագրությամբ **Ա. Այվազյանի**, Երևան, 2007, էջ 230-257:

⁶ Թուրքերը պարզ հետապնդում են, իրենց իսկ բառերով՝ «Սփյուռքի հետ Հայաստանի հարաբերությունների թուլացման նպատակ». - տե՛ս, օրինակ, **Այդրն Սեզեր, Մեկուսացման է մղվում ոչ թե Հայաստանը, այլ՝ Թուրքիան**, «Ռեֆերանս» օրաթերթ, 15.05.2008, թարգմանաբար տե՛ս <http://artmamul.ararat-center.org/?p=25> (նաև «Արարատ» ՌԿ-ի թիվ 3 ծանոթագրությունը), «Սփյուռքը վնասում է Հայաստանի ժողովրդին», [«Հաբեր27ում»](http://www.haber27.com) (Haber27com) 26 ապրիլի 2008թ., <http://artmamul.ararat-center.org/?p=5>:

⁷ Այս մասին տե՛ս **Կարլեն Դալլաքյան. Ռատկավար Ազատական Կուսակցության պատմություն**: Գիրք երկրորդ, Երևան, «Մուղնի» հրատ., 2007, էջ 271-282: Այս էջերում հրատարակված են թուրքական հինգ գաղտնի փաստա-

թղթեր, որոնք բացահայտում են, մասնավորապես, որ դեռևս մինչև հայ վրիժառուական գործողությունները թուրքական գաղտնի սպասարկություն ՄԻԹ-ն ունեցել է սփյուռքահայության վրա հսկող գաղտնի գրասենյակ՝ իր պետով: Այս գրքի մասին **Գ. Յազարյանի** գրախոսությունը, լրացուցիչ տեղեկություններով, տե՛ս «*Ազգ*», 02.02.2008:

⁸ Տե՛ս Մանվել Զուլայան, Հայոց պատմության խեղաթյուրումը արդի թուրք պատմագրության մեջ (հին և միջին դարեր), Երևան, 1995:

⁹ Առնվազն մի դեպքում, օտար և հայկական աղբյուրների համաձայն, 1993 թ. աշնանը թուրքական Երրորդ բանակը պատրաստվում էր իսկապես ներխուժել Հայաստան: Տե՛ս նաև Ա. Айвазян, "Лжеинформация о связи Армении и Курдской рабочей партии - возможная прелюдия к турецкому вторжению," *REGNUM*, 07 декабря 2007 г.; "Чем, по-вашему, занимаются сегодня турецкие спецслужбы в Армении?", *Голос Армении*, 04.03.2008.

¹⁰ Մանրամասն տե՛ս **Ա. Այվազյան**, «Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունը Հայկական հարցի համատեքստում», Ելույթ ՀՀ ԱԺ «Հայ-թուրքական հարաբերություններ. հիմնախնդիրներ և հեռանկարներ» թեմայով լուսններին, 19-20 դեկտեմբերի 2007 թ.:

¹¹ Ահա ՀՀ Թուրքիայի նկատմամբ տարվող քաղաքականության դեմ սփյուռքահայության բողոքի մի դրսևորում՝ **Garen Yegparian**, "Not in My Name," *The Armenian Weekly*, Vol. 74, No. 39, October 4, 2008:

¹² Ողջունելի է, որ ՀՀ նախագահը 2008 թ. նոյեմբերին վերջապես հրաժարվեց նախորդ երեք ամիսների ընթացքում ընդունելի հայտարարված այդ սին ու վտանգավոր գաղափարից, որն արդեն իսկ սկսել էր հուզումներ առաջացնել և՛ պատմագիտական, և՛ քաղաքական, և՛ հասարակական շրջանակներում:

¹³ **Ա. Այվազյան**, Հայ-թուրքական հարաբերություններ գոյություն չունեն, կա հայ-թուրքական հակամարտություն, «*Եթեր*», 25.09.2008:

¹⁴ «ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հարցազրույցը թուրքական «Ռադիկալ» օրաթերթին», 28.08.2008:

¹⁵ Տե՛ս «ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հարցազրույցը թուրքական «Ռադիկալ» օրաթերթին», տե՛ս *Ազգ*, 29.08.2008:

¹⁶ Այս մասին տե՛ս Ա. Այվազյան, *Հայաստանի պատմության լուսաբանումը ամերիկյան պատմագրության մեջ*, էջ 37-40:

¹⁷ «Մենք քննարկեցինք երկկողմ և տարածաշրջանային նշանակության բազմաթիվ հարցեր: Ամենակարևորն այն է, որ համաձայնեցինք առկա խնդիրները չթողնել գալիք սերունդներին: Ես հավատում եմ, որ հայ-թուրքական հարաբերություններում իսկապես եկել է խնդիրները լուծելու ժամանակը, և այդ հարցում պատրաստակամություն տեսա նաև Նախագահ Գյուլի մոտ: Համոզված եմ, որ նշված ուղղությամբ պետք է արագ և վստահ առաջ շարժվել...» («Նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի 63-րդ նստաշրջանում», 25.09.2008, ամբողջական տեքստը՝ <http://president.am/events/statements/arm/?id=19>):

¹⁸ Այս հարցի քննարկումը և տարածքային վեճեր ունեցող պետությունների համառոտ ցանկը տե՛ս Ա. Այվազյան, *Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունը Հայկական հարցի համատեքստում*, նշվ. աշխ.:

¹⁹ Դրանցից երկուսը թարգմանաբար տե՛ս *Ազգ*, 24.09.2008 և «Մեզ համար որևէ խոչընդոտ չկա», «Բի Բի Սի Թրքիշ սրվիս», 28 հոկտեմբերի 2008թ., <http://artmamul.ararat-center.org/?p=109>: Եվս մի հարցազրույց ՀՀ արտգործնախարարը տվել է 2008թ. սեպտեմբերի 7-ին՝ «Էդվարդ Նալբանդյանը հանդիպել է թուրք լրագրողներին». – *Panorama.am*, 09.09.2008. "Глава МИД Армении: В лексикон вошел термин "футбольная дипломатия", 09.09.2008, <http://regnum.ru/news/1052302.html>:

²⁰ Ի դեպ, այս հարցազրույցում ՀՀ վարչապետը, մոռանալով Սումգայիթում, Բաքվում, Կիրովաբադում, Մարաղայում իրագործված ցեղասպանական գործողությունները, Արցախի դեմ պատերազմի սանձազերծումը, հակահայկական ռասիստական ամենօրյա քարոզչությունը, Ադրբեջանի հասցեին անտեղի հաճոյախոսում է, ասելով, թե «Ադրբեջանն նվիրված է համաեվրոպական արժեքներին» ("Премьер Армении предлагает Азербайджану "попытаться увидеть общее будущее", *REGNUM.ru*, 07.10.2008):

²¹ Մանրամասն տե՛ս **Ա. Այվազյան**, «Հայաստանի դիվանագիտության դարպասին թուրքական գոլերի թիվը կարող է աճել», *Երկիր*, 26.09.2008 և "Любые уступки приблизят войну", *Голос Армении*, интервью с А. Айвазяном, 14.10.2008:

²² Այս մասին առավել մանրամասն տե՛ս **Ա. Այվազյան**, «Սերի պայմանագրի չիրագործման հետևանքները Մերձավոր Արևելքի և միջազգային քաղաքականության համար». – *Հայաստանի ազատագրված տարածքը և Արցախի հիմնախնդիրը: Նյութերի ընտրանի*, Երևան, «Լուսակն», 2006, էջ 83-91:

²³ «Մեզ համար որևէ խոչընդոտ չկա», «Բի Բի Սի Թրքիշ սրվիս», 28.10.2008, <http://artmamul.ararat-center.org/?p=109>:

²⁴ Հիշեցման կարգով նկատենք, որ արևմտահայ ղեկավարությանն էլ նման «լավատեսություն» էր պատել Մեծ Եղեռնին նախորդող տարիներին: Այս մասին տե՛ս նաև Ա. Այվազյան, «Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունը Հայկական հարցի համատեքստում», նշվ. աշխ.:

²⁵ Տե՛ս ՀՀ նախագահ Ս. Սարգսյանի հետևյալ հոդվածը՝ Serzh Sargsyan, "We Are Ready to Talk to Turkey," *Wall Street Journal*, July 9, 2008:

²⁶ «Թուրք-հայկական սահմանների բացման և դարաբաղյան հարցի հետ կապված խնդիրները լուծվելու են համալիր կերպով, - ասել է Ալի Բաբաջանը». - [Թերթ.am 01.12.08](#):

²⁷ ՀՀ խորհրդարանում ներկայացված «Օրինաց երկիր» կուսակցության խմբակցության ղեկավարը նույնիսկ ցանկալի է համարում ՀՀ քաղաքացիների Թուրքիա արտագնա աշխատանքի մեկնելը՝ առանց դուրս ինչ մտորելու այդ երևույթի հետևանքների մասին (տե՛ս «Бывший оппозиционер предлагает гражданам Армении работать в Турции и одобряет кандидатуру нового спикера», www.regnum.ru/news/1063777.html, 02.10.2008)

²⁸ Տե՛ս «Ո՞վ է հայը» (Բաց նամակ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանին), «*Առավոտ*», 2.10.2008:

²⁹ Առավել մանրամասն տե՛ս Ա. Այվազյան, **Հայ-թուրքական հակամարտության այսպես կոչված «կարգավորման» և նրա բովանդակության մասին**, «*Հայոց աշխարհ*», 6.09. 2008):

³⁰ Լուծումների քննարկումը տե՛ս Ա. Այվազյան, **Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունը Հայկական հարցի համատեքստում**, նշվ. աշխ.: